ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«26» 11 2021թ.

ք. Երևան Ս. Դավթի 87ա

Ֆիզիկական անձ Գոհար Վանոյանին
ՀՀ, ք. Երևան, Անդրանիկի 72 շ., 8 բն.

Ծանուցագիր

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետի կողմից կայացվել է 09.08.2021թ. թիվ 1513402 վարչական ակտը: Համաձայն վարչական ակտում ներկայացված փաստական տվյալների՝ Ձեր կողմից առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատանքի ընդունման պահանջները բավարարող աշխատանքային պայմանագրի կնքման պահել եք 1 վարձու աշխատող:

Նշված իրավախախտման համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^5 հոդվածի 1-ին մասով:

Նշված դեպքի առթիվ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու համար Դուք **09.12.2021թ. ժամը 15^{00}-ին անձնագրով** հրավիրվում եք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հատուկ գործերի բաժին ք. Երևան, Սասունցի Դավթի 87Ա (4-րդ հարկ 405 սենյակ, հեռ. 011 54 91 91, ներքին 91-59) հասցեով:

Սույն ծանուցագրում նշված օրը չներկայանալու դեպքում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 267 հոդվածի համաձայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Իրավաբանական վարչության
հատուկ գործերի բաժնի
գլխավոր մասնագետ

Ա. Խեդոյան